ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ ՈՐՊԵՍ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԳՈՐԾՈՆ

«Տեսությունը, որ չի ստուգվում փորձով, իր հայեցակարգի գեղեցկությամբ հանդերձ՝ կորցնում է կշիռը, չի ընդունվում. պրակտիկան, որի հիմքում չկա կշռադատված տեսություն, կորստի ու պարտության մեջ է»:

Դմիտրի Մենդելեև

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i64.97

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկված է ուսանողների մասնագիտական պատրաստության կատարելագործման միջոցներից մեկի՝ ուսումնական պրակտիկայի կազմակերպման հիմնախնդիրը, մասնավորապես թանգարաններում իրականացվող ուսումնական պրակտիկան:

Առանձնացված են մի քանի կարևոր դրույթներ, որոնք առավել ընդգծում են Հայկական պետական մանկավարժական համալսարանի գեղարվեստական կրթության ֆակուլտետում ուսումնական պրակտիկայի դերը: Մասնագիտական պրակտիկայի ընթացքում ուսանողի և պրակտիկայի ղեկավարի, մեթոդիստի փոխազդեցության առավել ակտիվացումը՝ անհատականության սկզբունքի հաշվառմամբ, ապահովում է ուսանողների ուսումնական հնարավորությունների լիարժեք դրսևորումը, ստեղծագործական ինքնուրույնության զարգացումը:

Ուսումնական պրակտիկան՝ որպես համատեղ մանկավարժական գործունեություն, պայմանավորում է կոլեկտիվ ռեֆլեքսիայի և ինքնառեֆլեքսիայի,

ինքնակազմակերպման կարողունակության ձևավորումը, որն իր հերթին նպաստում է ուսանողների մասնագիտական պատրաստության կատարելագործ-մանը: Այն ապահովում է ապագա մասնագետի կառավարչական այնպիսի կարևոր գործառույթի ձևավորումը, ինչպիսին է՝ սովորել պլանավորել իր մասնագիտական գործունեությունը: Այսինքն՝ պլանավորման գործառույթը ապագա մանկավարժի մասնագիտական պատրաստության համակարգում կարևոր, առանձնահատուկ նշանակություն ունի:

Բանալի բառեր և արտահայտություններ. *ուսանող, ուսումնական պրակտիկա, մանկավարժական գործունեություն, մասնագիտական ինքնուրույնություն, կրթական ծրագրեր, ուսումնական գործընթաց, կարողունակություններ, թանգարան:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների մասնագիտական պատրաստության ամբողջական գործընթացը մի շարք կառուցվածքային բաղադրիչների արդյունավետ համակցման արդյունքն է: Ուսանողների մասնագիտական կրթական ծրագրի բաղադրիչներից է ուսումնագիտական պրակտիկան, որի ընթացքում լուծվում են ուսումնական, հետազոտական, գիտական, մասնագիտական, մանկավարժական, ստեղծագործական բնույթի գործնական մի շարք խնդիրներ: Այն ուղղված է ուսումնառության ընթացքում ուսանողի ձեռք բերած տեսական և գործնական գիտելիքների ամրապնդմանը և մասնագիտական կարողունակությունների զարգացմանը:

Ուսումնագիտական պրակտիկան մանկավարժական բուհի ուսումնական գործընթացի կարևոր մասն է, ուսանողների մասնագիտական պատրաստության մակարդակի դրսևորման և նոր գործնական կարողունակությունների տիրապետման անհրաժեշտ պայմանը:

Մանկավարժական բուհի ուսանողի մասնագիտական պատրաստությունը, որը ներառում է մասնագիտական-առարկայական գիտելիքների և կարողունակությունների ամբողջությունը, նպատակաուղղված

ուսումնաճանաչողական, կազմակերպական գործընթաց է, որն իրականացվում է ուսումնառության տեսական ու գործնական կողմերի համամասնական ապահովմամբ:

Ուսանողների մասնագիտական պատրաստության գործընթացի տեսական մեթոդաբանական հիմքն են կազմում նրանց մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման սկզբունքների, նպատակների, միջոցների, ձևերի, մեթոդների և տեխնոլոգիաների ամբողջությունը: Պրակտիկայի ընթացքում ձևավորվում են ապագա մասնագետների, մանկավարժների անձնային և մասնագիտական որակները, կարողունակությունները, հմտությունները, արժեքային համակարգը:

Այսօր ուսանողների մասնագիտական պատրաստության գործընթացը արդյունավետության ապահովումը պայմանավորված է մի շարք գործոններով.

- կրթական սոցիալ-մշակութային միջավայրի ապահովմամբ,
- մեթոդական-տեխնոլոգիական,
- ռեֆլեքսիվ,
- սոցիալ-տնտեսական,
- նյութատեխնիկական,
- աշխատաշուկայի պահանջարկով:

Ուսումնական պրակտիկայի նպատակը ուսանողների մասնագիտական գործնական կոմպետեցիաների զարգացումն է, ինչպես նաև ուսումնական նախագծերի, ինքնուրույն հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ ուսումնական ռեսուրսների հավաքագրումն ու ընդհանրացումը:

Սովորաբար այն պլանավորվում և կազմակերպվում է ուսումնառության սկզբնական շրջանում. «Արվեստի տեսություն, պատմություն և կառավարում» և «Մշակութաբանություն» բաժինների ուսումնական պլաններում, ուսումնական պրակտիկան նախատեսված է ուսումնառության 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում:

Պրակտիկայի ծրագիրը ներառում է հետևյալ հիմնական բաժինները՝

- պրակտիկային վերաբերող ընդհանուր դրույթները,
- պրակտիկայի նպատակները և խնդիրները,

- պրակտիկայի տեղը բակալավրի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքում,
- պրակտիկայի անցկացման վայրը և ժամանակահատվածը,
- պրակտիկայի արդյունքում ուսանողի մեջ ձևավորվող կոմպետենցիաները (ունակությունները)՝ ըստ մասնագիտական կրթական ծրագրի,
- պրակտիկայի կառուցվածքը և բովանդակությունը,
- պրակտիկայի ատեստավորումը (պաշտպանություն),
- պրակտիկայի ռեսուրսային ապահովումը:

Վերը նշված բաժիններում սովորող ուսանողների մասնագիտական պրակտիկան կազմակերպվում է թանգարաններում՝ Հայաստանի ազգային պատկերասրահ, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ. Մատենադարան, Խաչատուր Աբովյանի անվան տուն-թանգարան, Կոմիտասի թանգարան ինստիտուտ, Սերգեյ Փարաջանովի տուն-թանգարան և այլն:

Ինչո՞վ է պայմանավորված թանգարանի՝ որպես ուսումնական պրակտիկայի վայրի ընտրությունը: Թանգարանները կրթադաստիարակչական կառույցներ են, որոնք մարդկության հավաքական հիշողության կրողն են և հանրության լայն զանգվածներին գիտելիք հաղորդող հարուստ կենտրոններ: Այստեղ ցուցադրվող նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգությունը ներունակ է փոխանցել անցյալի փորձը՝ ընձեռելով կրթական լայն հնարավորություններ:

Թանգարանները՝ որպես կրթադաստիարակչական կենտրոններ են ընկալվել դեռևս 20-րդ դարասկզբին. 1903թ. Գերմանիայում կազմակերպված «Թանգարանները որպես կրթական և դաստիարակչական հիմնարկություններ» թեմայով գիտաժողովում Համբուրգի պատկերասրահի տնօրեն Ա. Լիխտվարկն առաջադրեց այն գաղափարը, որ ի շահ համալսարանների և ակադեմիաների՝ «19-րդ դարն ավելացրեց մի նոր բարձրագույն կրթադաստիարակչական հաստատություն՝ թանգարանը» **(Գրիգորյան Ա., Մարաբյան Ա., 2016)**:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր ուսումնասիրության մեջ դիտարկել ենք ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի կողմից կազմակերպված ուսումնական պրակտիկաները, որոնք, որպես կարգ, ընթանում են թանգարաններում և միտված են զարգացնելու բակալավրի ուսանողների մասնագիտական գիտելիքները, կարողություններն ու հմտությունները:

Դիտարկելով 2023-2024 ուսումնական տարվա բակալավր 3-րդ կուրսի ուսումնական պրակտիկան (շարունական)՝ առանձնացրել ենք մի քանի կարևոր դրույթներ, որոնք առավել ընդգծում են ուսումնական պրակտիկայի դերը ուսանողների մասնագիտական կատարելագործման գործընթացում.

- Թանգարաններում ընթացող պրակտիկան ուսումնական գործընթացի կարևորագույն մասն է, քանի որ ուսանողներին նոր հմտություններ և կարողություններ ձեռք բերելու, աշխատանքային գործընթացին տեղում ծանոթանալու հնարավորություն է տալիս:
- Տեսողական ընկալումների և տեսական գիտելիքների համադրությամբ ուսանողը ստանում է իր ապագա մասնագիտության ամբողջական պատկերը:

Շատ կարևոր է ուսանողներին ղեկավարող մեթոդիստի և թանգարանի աշխատակցի համագործակցության արդյունքում կազմված ուսումնական պրակտիկայի անցկացման թեմատիկ ծրագիրը, ժամանակացույցը և հանդիպումների բովանդակությունը:

Օրինակելի աշխատանքային գրաֆիկը պետք է նման տեսք ունենա.

(1-ին կիսամյակ, Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան)

№	Թեմայի վերնագիրը, բովանդակությունը	Ժամ
1.	Ծանոթացում թանգարանի մշտական ցուցադրության հետ - կինո և գրականություն **Գործնական առաջադրանք.** • կազմել անհատական շրջայցի ծրագիր 12-14 տարիքային խմբի երեխաների համար՝ հաշվի առնելով վերջիններիս տարիքային, հոգեբանական առանձնահատկությունները,	**16**

	• մշակել և ներկայացնել հանձնարարության իրականացման մեթոդները:	
2.	Ծանոթացում թանգարանի մշտական ցուցադրությանը- թատրոն և սփյուռք **Գործնական առաջադրանք.** • կազմել անհատական շրջայցի ծրագիր 14-16 տարիքային խմբի երեխաների համար, որը հարցեր և առաջադրանքներ կներառի նաև թեմայի շրջանակներում, • մշակել և ներկայացնել հանձնարարության իրականացման մեթոդները:	**16**
3.	Ծանոթացում թանգարանի մշտական ցուցադրությանը – Մարկոս Գրիգորյան **Գործնական առաջադրանք.** • ուսումասիրել և առանձնացնել Մարկոս Գրիգորյանի անհատական հավաքածուն՝ ըստ արվեստի տեսակների, • մշակել ցուցադրության նոր կոնցեպտ և ներկայացնել տեսասահիկի միջոցով:	**16**
4.	Ծանոթացում թանգարանի գիտական և հանրային բաժինների աշխատանքին. հուշաարխիվային ֆոնդեր, մարկետինգի բաժին, գրադարան և այլն: **Գործնական առաջադրանք.** • ուսումնասիրել թանգարանի ռազմավարական պլանը (ըստ տարիների), • կազմել ռազմավարական պլան (1 տարվա համար) և ներկայացնել այն տեսասահիկի միջոցով	**16**
5.	Ծանոթացում թանգարանի կողմից իրականացվող կրթական ծրագրերին: **Գործնական առաջադրանք.** Կազմել և իրականացնել կրթական ծրագիր, որը կընդգրկի տարբեր տարիքային խմբերի երեխաների և կհամապատասխանի թանգարանի ռազմավարությանը (աշխատել խմբերով)	**16**
6.	Սեմինարների անցկացում, հանդիպումներ, ընթացիկ միջոցառումներ	**10**

Թանգարանային ցանկացած կրթամշակութային ծրագիր՝ շրջայց, խաղ-շրջայց, դասախոսություն, թանգարանային դաս, պարապմունք և այլն, իրականացնելուց առաջ անհրաժեշտ է կազմել տվյալ ծրագրի համապատասխան նախագիծ-առաջարկը:

Նախագիծ-առաջարկը սովորաբար նախատեսում է թեմայի, լսարանի, նպատակի, խնդիրների, սկզբունքների, աշխատաձևերի, աշխատավայրի, մեթոդների, հնարքների, միջոցների, աշխատանքի տևողության ընտրությունն ու հիմնավորումը, ինչպես նաև սպասվելիք արդյունքներն ու դրանց գնահատումը: Թանգարանի խորհրդի կողմից հավանության արժանացած նախագիծ-առաջարկը դառնում է պաշտոնական փաստաթուղթ, որով առաջնորդվում են թանգարանի կրթական ծրագրերով զբաղվող գիտաշխատողները: Նախագիծ-առաջարկի մեջ նշվում է հեղինակը և ծրագրի հաստատման ժամանակը: Ընթացքում կարելի է կատարել նաև գիտական վերջին հետազոտություններից կամ ծրագրի փորձից բխող փոփոխություններ:

Թանգարանում կարևոր տեղ է հատկացվում և՛ ուսանողների, և՛դպրոցականների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման և ղեկավարման մեթոդներին: Այդ նպատակով տարբեր տարիքի երեխաների համար հատուկ «աշխատանքային տետրեր» են կազմվում:

Թանգարանը ուսանողներին կարող է առաջարկել հնարավորությունների բավականին լայն շրջանակ՝ մասնակցելու որոնողական, հետազոտական, ֆոնդային, կրթական և կառավարման աշխատանքներին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Կրթական գործառույթը թանգարանի ինքնուրույն, ինստիտուցիոնալ գործառույթն է: Այսօր աշխարհի խոշոր թանգարաններ կարևորագույն գիտահետազոտական և կրթական կենտրոններ են, որոնք հասարակության տարբեր սոցիալական և տարիքային խմբերի համար բազմապիսի կրթական ծրագրեր են առաջարկում: Թանգարանը նաև սոցիալ-մշակութային համակարգային փոփոխություններ իրականացնելու կարևոր սոցիալական

հարթակ է, իսկ թանգարանային կրթության բազմաթիվ եղանակներն այն հենքն են, որի միջոցով հնարավոր է կյանքի կոչել այդ փոփոխությունները:

Թանգարաններում իրականացվող ուսումնական պրակտիկայի գրաֆիկը և բովանդակությունը հաստատվում է Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի կողմից՝ ուսումնական պլանի համաձայն՝ հաշվի առնելով նաև պրակտիկայի անցկացման վայրը և թանգարանի առանձնահատկությունը:

Այն կազմված է երեք փուլերից.

- Պրակտիկայի առաջին մաս – ծանոթացում թանգարանի մշտական ցուցադրության ուղղվածությանը, հիմնական բաժինների աշխատանքի առանձնահատկություններին:
- Պրակտիկայի երկրորդ մաս - ուսումնասիրում ֆոնդերի ձևավորման առանձնահատկություններին, ցուցահանդեսների կազմակերպման կոնցեպտուալ մոտեցումներին, իրականացվող կրթական ծրագրերին:
- Պրակտիկայի երրորդ մաս - անհատական կրթական ծրագրերի կազմում և իրականացում՝ հաշվի առնելով մասնակիցների տարիքային հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները:

Թանգարանային պրակտիկայի ընդհանուր ծավալը 1-ին կիսամյակի համար կազմում է 90 ժամ (3 կրեդիտ), 2-րդ կիսամյակում՝ 180 ժամ (6 կրեդիտ):

Ուսումնական պրակտիկայի խնդիրն է ուսանողներին ծանոթացնել ընտրած մասնագիտության կիրառական հիմունքներին, մասնագիտության առանձնահատկություններին, որի արդյունքում նրանք պետք է ձեռք բերեն մասնագիտական կարողություններ և հմտություններ:

Ուսումնական պրակտիկան կարող է կրել ճանաչողական, ուսուցողական բնույթ, սակայն պետք է շեշտել, որ պրակտիկան միայն ուսումնական ռեսուրս չէ, այն հնարավորությունների դաշտ է, որը պետք է լիարժեք օգտագործել:

Վերոբերյալը ենթադրում է, որ մասնագիտական պրակտիկայի ընթացքում ուսանողների և պրակտիկայի ղեկավարի, մեթոդիստի փոխազդեցության առավել ակտիվացումը՝ անհատականության սկզբունքի հաշվառմամբ, ապահովում է

ուսանողների ուսումնական հնարավորությունների լիարժեք դրսևորումը, ստեղծագործական ինքնուրույնության զարգացումը: Մասնագիտական պրակտիկան որպես համատեղ մանկավարժական գործունեություն, պայմանավորում է կոլեկտիվ ռեֆլեքսիայի և ինքնառեֆլեքսիայի, ինքնակազմակերպման կարողունակության ձևավորումը, որն իր հերթին նպաստում է ուսանողների մասնագիտական պատրաստության կատարելագործմանը: Այն ապահովում է ապագա մասնագետի կառավարչական այնպիսի կարևոր գործառույթի ձևավորումը, ինչպիսին է սովորել պլանավորել իր մասնագիտական գործունեությունը: Այսինքն՝ պլանավորման գործառույթը ապագա մանկավարժի մասնագիտական պատրաստության համակարգում կարևոր, առանձնահատուկ նշանակություն ունի:

Ըստ Զ. Ռեշետովայի՝ գործունեության պլանավորումը ենթադրում է.

- գործունեության իրականացման և ակնկալվող արդյունքների մտովի կանխատեսում,
- գործունեության համակարգի ձևավորում, որը գիտականորեն հիմնավորված պլանի մշակման հիմքն է (**Решетова З.,1985**):

Մանկավարժական գործունեության պլանավորումը ենթադրում է՝

- մանկավարժական իրավիճակի գնահատում գլխավոր նպատակի տեսանկյունից,
- աշխատանքի ընթացքի և արդյունքների հիմնավորված կանխատեսում և դրանց հետ անմիջականորեն կապված նպատակների ու խնդիրների որոշում,
- ուսուցման գործընթացի կազմակերպման տրամաբանորեն փոխկապված գործողությունների ալգորիթմի մշակում, դրանց իրականացման նպատակահարմար միջոցների,

  ձևերի, մեթոդների և տեխնոլոգիաների ընտրություն,
- դրանց համարժեք մանկավարժական պայմանների որոշարկում,
- աշխատանքի հստակ բաշխում ուսումնական գործընթացի սուբյեկտների միջև,

- կրթական գործընթացի արդյունավետության հայտորոշում, գնահատում և արդյունքների վերլուծություն:

Ուսումնական պրակտիկայի արդյունքում ձևավորված նշված գործողությունների իրականացման կարողունակությունը մասնագիտական պատրաստության բարձր մակարդակի վկայությունն է:

Ուսանողների մասնագիտական պատրաստության կատարելագործման նպատակով իրականացվող պրակտիկայի կազմակերպումը կարգավորվում է օրենքով, իսկ իրականացման ձևերն ու մեթոդները սահմանվում են ուսումնական հաստատության կողմից՝ ելնելով մշակված կրթական ծրագրերի բնութագրերից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կրթական համակարգի համալիր արդիականացման անհրաժեշտության հետ միաժամանակ առկա է կադրերի պահանջարկի հիմնախնդիրը. կա հակասություն առկա պահանջարկի և առաջարկի միջև: Զարգացող ու փոփոխական աշխարհում մասնագիտության ճիշտ ընտրությունը, թերևս, ամենակարևոր հարցն է:

Պրակտիկայի կարևորությունը հատկապես շեշտադրվել է վերջին մի քանի տարիներին՝ հաշվի առնելով ուսումնական պրակտիկայի միջազգային փորձը. նպատակը՝ ուսանողին կողմնորոշել կոնկրետ գործնական կարողությունների ակտիվ դրսևորման, բացահայտել մանկավարժական կրթության գործընթացի իմաստը այն տեսլականով, որ մանկավարժական գործունեության տարբեր ձևերում հմտությունների ձեռքբերմամբ ուսանողը աստիճանաբար վարժվում է ինքնուրույն գործունեությանը, որում նա գիտակցում է իր դերը որպես մանկավարժ (**Хайбулаев М.** https://cyberleninka.ru/article/n/suschnost-samostoyatelnoy-raboty-studentov-i-ee-vidy/viewer):

Ներկայումս Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում համակարգային փոփոխություններ են իրականացվում մասնավորապես շարունակական պրակտիկայի առումով. կադրային ճիշտ քաղաքականություն վարելու արդյունքում դպրոցը, դիտարկվող պրակտիկայի պարագայում՝ թանգարանը, իր համար կադրեր ընտրելու հնարավորություն է ստանում:

Գաղտնիք չէ, որ նույնիսկ լավ կառուցված տեսական դասընթացն ի վիճակի չէ փոխարինել փորձերի և սխալների արդյունքում ստացված, իրական գործունեության արդյունքում ձեռք բերված կարողություններին և հմտություններին:

Շրջանավարտների որակավորումը և նրանց արժեքը աշխատաշուկայում բարելավելու նպատակով ուսանողների համար բուհում իրականացվում են բազմաթիվ կառավարչական բարեփոխումներ, որոնցից հատկապես պետք է շեշտադրել կրթական գործընթացի թվայնացումը, կառավարման համակարգի արդիականացումը, սոցիալական տարաբնույթ ինստիտուտների, տարբեր երկրների բուհերի հետ համագործակցությունն ու փորձի փոխանակումը, ուսանողների փոխանակումը, համալսարանի միջազգայնացումը և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Գրիգորյան Ա., Մարաբյան Ա. (2016)**, Կրթությունը թանգարանում (ուսումնամեթոդական ձեռնարկ), Երևան, «Էդիտ Պրինտ» հրատ.:
2. **Хайбулаев М.**, Сущность самостоятельной работы студентов и ее виды, Известия ДГПУ, https://cyberleninka.ru/article/n/suschnost-samostoyatelnoy-raboty-studentov-i-ee-vidy/viewer
3. **Решетова З. (1985)**, Психологические основы профессионального обучения, Москва, Изд. МГУ.

REFERENCE

1. **Grigoryan A., Marabyan A. (2016),** Krt'owt'yowny' t'angaranowm (owsowmnamet'odakan d'er'nark) /Education in the museum (teaching manual)/, Yerevan, “Edit print” ed.
2. **Khaybulaev M.,** Sushchnost' samostoyatel'noy raboty studentov i yeye vidy /The essence of students’ independent work and its types/, https://cyberleninka.ru/article/n/suschnost-samostoyatelnoy-raboty-studentov-i-ee-vidy/viewer.

3. **Reshetova Z. (1985)**, Psikhologicheskiye osnovy professional'nogo obucheniya /Psychological foundations of vocational training/, Moscow, Moscow State University ed.

Сюзанна Григорян

Образовательная практика в музеях как дополнительный фактор профессионального развития

Заключение

Ключевые слова и выражения: *студент, образовательная практика, педагогическая деятельность, профессиональная самостоятельность, образовательные программы, учебный процесс, способности, музей.*

В статье рассматривается проблема организации учебной практики, как один из путей повышения профессиональной подготовки студентов.

Выделены несколько важных положений, которые подчеркивают роль учебной практики на факультете художественного образования в профессиональном становлении студентов.

Отмечается, что в ходе профессиональной практики, чем больше активизация взаимодействия студентов и руководителя практики, методист, учитывая принцип индивидуальности, обеспечивает полное проявление образовательных возможностей студентов, развитие творческих способностей, независимость.

Профессиональная практика как совместная педагогическая деятельность обуславливает формирование способности к коллективной рефлексии и саморефлексии, самоорганизации, что в свою очередь способствует совершенствованию профессиональной подготовки студентов. Это обеспечивает формирование такой важной управленческой функции будущего специалиста, как обучение планированию своей профессиональной деятельности. Иными словами,

функция планирования имеет важное, особое значение в системе профессиональной подготовки будущего педагога.

Syuzanna Grigoryan

Educational practice in museums as an additional factor of professional development

Conclusion

Key words and expressions: *student, educational practice, pedagogical activity, professional independence, educational programs, educational process, abilities, museum.*

The article considers the problem of organization of educational practice, one of the ways to improve students' professional training.

Several important provisions are highlighted, which emphasize the role of educational practice in the Faculty of Art Education in the professional development of students.

It is noted that during the professional practice, the greater activation of the interaction between students and the head of the practice, the methodologist, taking into account the principle of individuality, ensures the full manifestation of the students' educational opportunities, the development of creative independence.

Professional practice as a joint pedagogical activity conditions the formation of the ability of collective reflection and self-reflection, self-organization, which in turn contributes to the improvement of students' professional training. It ensures the formation of such an important managerial function of the future specialist as learning to plan his professional activities. In other words, the function of planning has an important, special significance in the system of professional training of the future teacher.

Սյուզաննա Գրիգորյան *- Արվեստագիտության թեկնածու, Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչի պ/կ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ արվեստ, սփյուռքի մշակույթ, արտ մենեջմենտ: Հեղինակ է շուրջ քսան գիտական հոդվածի: Էլհասցե՝ grigoryansyuzanna20@aspu.am*

Сюзанна Григорян *- Кандидат искусствоведения, исполняющая обязанности заведующего кафедрой истории, теории искусств и культурологии (АГПУ). Его исследования сосредоточены на армянском искусстве, культуре диаспоры, арт-менеджменте. Она также опубликовала несколько статей в научных журналах.*
grigoryansyuzanna20@aspu.am

Syuzanna Grigoryan *- PhD in Arts, Acting head of the department Art History, Theory and Cultural Studies (ASPU). His research focuses on Armenian art, Diaspora culture, art management. She has also published several articles in scientific journals.*
grigoryansyuzanna20@aspu.am

Խմբագրություն է ուղարկվել 25.02.2024թ.
Հանձնարարվել է գրախոսության 01.03.2024թ.
Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ.